ԱՊՐԻԼԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃԱՆԱՉՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

«Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագրի շրջանակներում երիտասարդական ոլորտի փորձագետ, ծրագրի ղեկավար Արթուր Նաջարյանը և երիտասարդական ոլորտում հանրային քաղաքականության փորձագետ Աննա Եղոյանը հանդիպում-քննարկումներ ունեցան երիտասարդական ոլորտի մի շարք ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների հիմնական նպատակն էր քննարկել ՀՀ-ում բաց երիտասարդական աշխատանքի մոդելի՝ որպես երիտասարդների հետ աշխատանքի արդյունավետ միջոցի, ներդրման հեռանկարները, ինչպես նաև հետագա համագործակցության հնարավոր ձևաչափերը:

«UPSHIFT ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ԶՈՐԱԿՑՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ապրիլի 14-ին Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում Յունիսեֆի «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ«Ծրագրերի նախագծում» թեմայով դասընթաց: Դասընթացին մասնակցում էին 46 պատանիներ Շիրակի և Լոռու մարզերից:

Համայնքային երիտասարդական ծրագրային գաղափարների մրցույթի երկրորդ փուլ անցած 10 թիմերը վիճակահանության միջոցով ընտրեցին իրենց մենթորներին, որոնց աջակցությամբ մինչև մայիսի 5-ն աշխատելու են ծրագրային գաղափարների վրա՝ սահմանելով և հստակեցնելով նպատակները, խնդիրները, գործողությունները, պատասխանատուներին, առկա ու պահանջվող ռեսուրսները:

«GET A BIKE, GET A LIFE» ԾՐԱԳԻՐ

Ինչպես գիտեք, ԵՆԿ ՀԿ-ն հունվարին հիմնադրել էսոցիալական ձեռնարկություն (ՍՁ), որը նպատակ ունի Գյումրիում զարգացնելու հեծանվավարության մշակույթ ու մատուցելու զբոսաշրջային մատչելի ծառայություններ:

Ձեռնարկությունը գործելու է BikeLife ապրանքանիշի ներքո: Ուրախալի է, որ հեծանվային մշակույթի զարգացման ցանկություն ունեն նաև այլ ակտիվ քաղաքացիներ, ովքեր ծրագրի ղեկավար Կարեն Տերտերյանի հետ միավորվել են ընդհանուր նախաձեռնության շուրջ:

Նախաձեռնության անդամները Գյումրիում հեծանվային երթուղիներ ունենալու հնարավորությունն ու հարակից հարցեր հստակեցնելու նպատակով ապրիլի 2-ին հանդիպել են Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ պարոն Ռ. Սանոյանի հետ: Վերջինս ողջունել է նախաձեռնությունն ու համագործակցելու պատրաստակամություն է հայտնել: Նորությունների մասին կտեղեկացնենք առաջիկայում:

Ծրագրի շրջանակում ապրիլի 3-ին Կարեն Տերտերյանը փորձի ծանոթացման ճանապարհորդական այց է կատարել Վանաձորի «ՀԿ կենտրոն» և «Դիլիջանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն», ովքեր նմանատիպ ծրագրեր են իրականացնում: Քննարկվել են հեծանվային ծառայությունների մատուցման նրանց փորձին առնչվող մի շարք հարցեր, և որոշվել է ոլորտային համագործակցություն հաստատել կառույցների միջև:

Ապրիլի ընթացքում մշակվել է մեր ՍԶ-ի ծառայությունների փաթեթն ու պատրաստվել է պաշտոնական կայքը: Մոտ օրերս սպասեք դրանց շնորհանդեսին:) Իսկ մինչ այդ միացեք ՍԶ-ի ֆբ էջին և հետևեք նորություններին նաև այնտեղ:

«Get a bike, get a life» ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ՔՀ Կամուրջ ծրագրի շրջանակներում:

ERASMUS+ YOUTH. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ապրիլի 10-ին Հայաստանում Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոնը Հայ-ռուսական համալսարանում կազմակերպեց տեղեկատվական հանդիպում, որին մասնակցեցին բուհի ուսանողները և համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Հանդիպման ընթացքում Տեղեկատվական կենտրոնի հայաստանյան ղեկավար Արթուր Նաջարյանի և ծրագրի համակարգող Մարիամ Ղարագյոզյանի կողմից ներկայացվեց Եվրամիության «Էրազմուս+ Երիտասարդություն» և «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի կողմից հայ երիտասարդներին, պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ընձեռվող կրթական ու վերպատրաստման հնարավորությունների մասին: Իսկ Չեխիայից ժամանած միջազգային կամավոր Մարտինա Հորնիչկովան ներկաների հետ կիսվեց կամավորական ծրագրին մասնակցության իր հաջողված փորձով:

«ՈՒՐԲԱԹՕՐՅԱ ՍՐՃԱՐԱՆ»

Ապրիլի 12-ին տեղի ունեցավ հերթական «Ուրբաթօրյա սրճարանը» ՝ այս անգամ թեման երաժշտությունն էր:

«Ուրբաթօրյա սրճարանին» հատուկ ջերմ մթնոլորտում մասնակիցները սովորեցին Էստոնական, Չեխական, Ֆրանսիական, Սլովակ ու Հայկական երգեր և ճաշակեցին ՄԵԿ ԲԱԺԱԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ:
Իսկ միջոցառումն ավելի երաժշտական ու սիրուն դարձրին «Զրաներկ» երաժշտական խմբի հեղինակային երգերը:

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»

Վրաստանի Թելավի քաղաքում տեղի ունեցավ դասընթաց երիտասարդական աշխատողների համար, ովքեր ներգրավվելու են «Երիտասարդների ձեռներեցության ուսուցումը հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում» երկարաժամկետ ծրագրում:

Հայաստանից ծրագրին մասնակցում էին ԵՆԿ անդամ և երիտասարդական աշխատող Մարիամ Սարիբեկյանը, Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս ԱրմինեԲաղդասարյանը, «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ում ծրագրի օգնական Արփինե Նիկոլյանը և «Սարապատը որպես տուրիստական հարթակ» նախաձեռնության անդամ Արման Գևորգյանը:

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Այս ամիս ունեցել ենք շարժունակության մեկ հնարավորություն. Միջազգային երիտասարդական ֆորում ԱՊՀ երկրներում ընթերցանության խթանման թեմայով, որը տեղի կունենա հունիսի 23-ից 30-ին Տաջիկստանում:

Ընտրված մասնակիցների մասին կտեղեկացնենք ավելի ուշ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ապրիլ ամսից սկսած ԵՆԿ-ում Եվրոպական կամավորական ծառայության կամավոր Պիա Կայ Սիլդը «Երիտասարդների տանը» իրականացնում է «Ձեռագործ աշխատանքների» ակումբ:

Այս ամսվա ընթացքում ունեցել ենք կարճաժամկետ Եվրոպական կամավորական աշխատանքի հնարավորություն Ֆրանսիայում և Լեհաստանում, ինչպես նաև երկարաժամկետ Եվրոպական կամավորական աշխատանքի հնարավորություն Լեհաստանում:

Ընտրված մասնակիցների մասին կտեղեկացնենք շուտով:

Ինչպես մյուս բոլոր ամիսները, ապրիլը ևս հագեցած էր կենտրոնում: Շարունակվում են երաժշտական, անգլերենի, քննարկումների և յոգայի ակումբները: Ավարտվեց համակարգչային ակումբը, որի մասնակիցները ներկայացրեցին իրենց ստեղծած վեբկայքերը: Իսկ ԵՆԿ ԵԿԾ կամավոր Պիա Կայի Սիլդի կողմից մեկնարկեց «Արվեստի ակումբը»:

«Բիզնեսի շաբաթվա» ընթացքում պատանիները ծանոթացան սոցիալական ձեռնարկատիրության առանձնահատկություններին:

Յունիսեֆի «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի շրջանակներում ընտրված լավագույն ծրագրային գաղափարներից մեկը ներկայացվել է «Երիտասարդների տան» սաների կողմից, ովքեր և մասնակցեցին «Ծրագրերի նախագծում» թեմայով դասընթացին :

Այս ամիս պատանիները հնարավորություն ունեցան ճանաչողական այցով լինել «Մկրտչյան արվեստի կենտրոնում» , որտեղ արվեստագետ Մարի Մկրտչյանը տեղում պատանիներին ծանոթացրեց իր կողմից պատրաստված ձեռքի աշխատանքներին և ասեղնագործ դիմանկարներին:

HayAr Jewellery հայկական զարդերի արվեստանոցում կազմակերպվեց ուսումնական այց, որտեղ Արտակ Թադևոսյանը պատանիներին ներկայացրեց զարդերի խորհուրդն ու կիսվեց ստեղծագործական նրբություններով:

ՀՀ քաղաքացու օրվա առիթով Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնում պատանիները զրույց-քննարկում ունեցան իրավապաշտպան Սեյրան Մարտիրոսյանի հետ:

Քաղաքացու օրվան ընդառաջ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից 14-18 տարեկան պատանիների շրջանում հայտարարված մրցույթի հաղթող ընտրված «Երիտասարդների տան» սան Լիլիթ Մուրադյանին ընձեռնվեց հնարավորություն հանդիպել նախարարի հետ, շրջել նախարարության ստորաբաժանումներում և ծանոթանալ դրանց աշխատանքին:

«Երիտասարդների տան» թվով 20 պատանիներ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում մասնակցեցին «Ծաղկահավաք» ամենամյա միջոցառմանը:

«Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագրի շրջանակներում ճանաչողական այցով կենտրոն հյուրընկալվեցին Սպիտակ համայնքի ղեկավար Գագիկ Սահակյանը և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Անահիտ Գյուլազյանը:

Կենտրոնում ճանաչողական այց և գործնական դաս անցկացրին ՇՊՀ սոցիոլոգիա բաժնի ուսանողները, ովքեր ծանոթացան «Երիտասարդների տան» գործունեությանն ու երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությանը:

«Երիտասարդների տան» բակում կենտրոնի երիտասարդների ու աշխատակիցների կողմից իրականացվեց ծառատունկ, որի շրջանակներում կենտրոնի տարածքում տնկվեցին գեղեցիկ ծառեր, որոնք տրամադրվել էին «ԷյԹիՓի» բարեգործական հիմնադրամի կողմից: